Կազմված է 17 .02. 2018թ.

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Լուսավոր Հայաստան» կուսակցության

Երկրորդ համագումարի

2018թ. փետրվարի 17-ի որոշումով

Կուսակցության նախագահ՝

Կարեն Կարապետյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«02» 02. 2016թ.

Գրանցման թիվ 211.172.886473

Վկայական թիվ 03Ա1036473

ՀՎՀՀ՝ 00150017

«02» 02. 2016թ. գրանցված կանոնադրության

Թիվ 001. 2 փոփոխությունը

Գրանցված է

ՀՀ իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

20.03. 2018թ.

Պետական ռեգիստրի գործակալություն

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ »

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2018

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը (այսուհետև՝ Կուսակցություն) անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորում է, որն իր գործունեությունն իրականացնում է անդամության կամավորության, ինքնակառավարման, անդամների իրավահավասարության, օրինականության, ժողովրդավարության, հրապարակայնության, թափանցիկության և նախաձեռնությունների ազատ դրսևորման սկզբունքներով:

1.2. Կուսակցությունն իրավաբանական անձ է, օգտվում է ՀՀ օրենսդրությամբ ընձեռված բոլոր իրավունքներից և կրում է դրանցով սահմանված պարտականություններ: Կուսակցությունը, նրա տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները գործում են Կուսակցության կանոնադրության հիման վրա և դրան համապատասխան (այսուհետև՝ Կանոնադրություն):

1.3. Կուսակցությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության մյուս օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև Կուսակցության ծրագրով:

1.4. Կուսակցության անվանումն է՝

-հայերեն՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցություն (հապավումը՝ ԼՀԿ),

-ռուսերեն՝ Партия “Просвещенная Армения” (հապավումը՝ ППА).

-անգլերեն՝ “Bright Armenia” Party (հապավումը՝ BAP):

1.5. Կուսակցությունն ունի խորհրդանշան, ձևաթուղթ, կնիք, բանկային հաշիվներ, այդ թվում՝ արտարժույթով:

1.6. Կուսակցության խորհրդանշանը՝ երեք անձանց ուրվագիծ սպիտակ գույնով, որոնցից առաջինն իր ձեռքում պահում է բոցավառված ջահ, երեքն էլ նայում են ջահի ուղղությամբ դեպի ձախ, հայացքները՝ դեպի վեր: Խորհրդանշանը պատկերվում է կամ սպիտակ գույնով մանուշակագույն

ֆոնի վրա կամ մանուշակագույն գույնով սպիտակ ֆոնի վրա: Խորհրդանշանից աջ գրված են «Լուսավոր Հայաստան կուսակցություն» բառերը:

1.7. Կուսակցության իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան 1 շենք, բնակարան 24:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կուսակցության ստեղծման նպատակներն են՝ ազատական գաղափարների հիման վրա ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը, նրա ենթակառուցվածքների ստեղծումը և եղածների կատարելագործումը, հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցությամբ և հասարակության ու պետության քաղաքական կյանքի մասնակցության այլ ձևերով, ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման նպաստելն է և իշխանության մարմիններ ձևավորելը:

2.2. Կուսակցությունն իր գործունեության խնդիրներն է համարում՝

- քաղաքական համակարգում հավասարակշռված պայքարի հաստատում՝ փոխզսպման ու հավասարակշռման կառուցակարգերի զարգացման միջոցով
- քաղաքական նոր մշակույթի հաստատում

- Հայաստանի Հանրապետությունում քաղաքական շարունակական սերնդափոխության իրականացում,
- ելնելով «Երիտասարդությունը Հայաստանի ներկան է» կարգախոսից երիտասարդության քաղաքացիական ներուժի քաղաքականապես ամրագրում՝ վերջիններիս համար գործունեության ազատ դաշտի ստեղծման միջոցով, ինչպես նաև երիտասարդներին օժտելով իրական լծակներով, ռեսուրսներով և հնարավորություն ընձեռելով սեփական գաղափարներն ու գիտելիքները քաղաքականության և պետական կառավարման ոլորտում, գործնականում կիրառելու համար
- ընտրողի ինստիտուտի ձևավորում, որը կփոխարինի քվեարկողին,
- նպաստում Հայաստանի Հանրապետության եվրոպական մոդելի պետություն դառնալուն և եվրոպական ինտեգրացիայի շարունակմանը՝ ընդհուպ մինչև ԵՄ լիիրավ անդամակցություն,
- Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական, պետաիրավական և քաղաքական այնպիսի կառուցակարգերի ձևավորում, որոնք Հայաստանը աշխարհասփյուռ բոլոր հայերի համար կդարձնեն կենսական շահերի կենտրոն,
- առաջնորդվելով «քաղաքականությունը՝ որպես առաքինության դրսևորում և մարդկային կյանքը երջանիկ դարձնելու միջոց» սկզբունքով և լուսավորականության գաղափարներով՝ նպաստել հայ քաղաքական միտքը համաշխարհային մտքի դաշտ դուրս բերելուն ու քաղաքակիրթ աշխարհի ինքնաբավ ներկայացուցիչ դառնալուն,
- քաղաքական համակարգում ինստիտուտների կայացման նպաստում՝ քաղաքականության մեջ շեշտը դնելով ինստիտուտների, այլ ոչ թե անձանց վրա,
- քաղաքական սոցիալականացմանը և քաղաքական մշակույթի ձևավորման նպաստում, որի միջոցով հնարավոր կլինի հասարակության շրջանում տարածել քաղաքական գիտելիքներ և

տեղեկատվություն՝ նրանց դարձնելով պատասխանատու և քաղաքական իրավունքների համար պայքարող քաղաքացիներ,

- հայ ազգային ինքնության տարրերի պահպանում և տարածում՝ նպաստել հայ ազգի և նրա մշակույթի զարգացմանը,
- ազգային անվտանգության բոլոր բաղադրիչների ապահովում և ՀՀ պետական ինքնիշխանության ամրապնդում:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ

3.1. Կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացի, ով ընդունում է Կուսակցության ծրագիրն ու Կանոնադրությունը և չի հանդիսանում մեկ այլ կուսակցության անդամ: Կուսակցության հիմնադիր կամ անդամ չեն կարող լինել «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձինք:

3.2. Կուսակցությանն անդամագրվում են կամավոր հիմունքներով, անհատական կարգով, անձնական դիմումի համաձայն, Կուսակցության Կառավարման խորհրդի կամ Կուսակցության Մարզային խորհրդի կամ Կուսակցության Համայնքային խորհրդի կամ Երևանի խորհրդի որոշմամբ:

3.3. Կուսակցության անդամը վճարում է անդամավճար, որի չափը և մուծման կարգը սահմանում է Կուսակցության Կառավարման Խորհուրդը:

3.4. Եթե ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Կուսակցությանն անդամակցությունն անհնարին է դառնում, այն կասեցվում է կուսակցության անդամի դիմումի հիման վրա, Կուսակցության Կառավարման Խորհրդի կամ Կուսակցության Մարզային խորհրդի կամ Կուսակցության Համայնքային խորհրդի որոշմամբ: Կասեցումը հանվում է նույն կարգով:

3.5. Կուսակցության անդամն իրավունք ունի՝

- ընտրելու և ընտրվելու տվյալ կուսակցության ու նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն

իրականացնող, ինչպես նաև ներկայացուցչական և ղեկավար մարմիններում (Քաղաքական խորհուրդ, Կառավարման խորհուրդ) ,

- ներկա լինելու կուսակցության համագումարի նիստերին,
- ծանոթանալու կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
- տեղեկատվություն ստանալու կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ,
- ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը,
- Կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակական-քաղաքական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ,
- մասնակցել այն ժողովին կամ նիստին, որտեղ քննարկվում է նրա անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ,
- բողոքարկել Կուսակցության կառուցվածքային մարմինների և ստորաբաժանումների որոշումներն ու գործողությունները Կուսակցության վերադաս մարմիններում,
- կամովին դադարեցնելու իրենց անդամակցությունը Կուսակցությանը,
- կասեցնել և վերականգնել իր անդամակցությունը Կուսակցությանը,
- օգտվել օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

3.6. Կուսակցության անդամը պարտավոր է

- գործել Կուսակցության կանոնադրության շրջանակներում,
- կատարել Կուսակցության Համագումարի, վերադաս մարմինների որոշումները և ծրագրային դրույթները,

- մասնակցել Կուսակցության նշանակած ժողովներին և միջոցառումներին,
- կատարել օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

3.7. Կուսակցությանն անդամությունը կորցնելու պայմաններն ու կարգը

Կուսակցությանն անդամակցությունը դադարում է՝

- դիմումի համաձայն Կուսակցությունից դուրս գալու դեպքում,
- Կուսակցությունից հեռացվելու դեպքում,
- մահվան դեպքում,
- Կուսակցության լուծարման դեպքում,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կորստի դեպքում,
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կուսակցությունների մասին», այլ օրենքներով և սույն Կանոնադրությունով նախատեսված այլ դեպքերում:

Կուսակցության անդամության դադարեցման դիմումն ընդունում է Կուսակցության Կառավարման խորհուրդը կամ մարզային խորհուրդը կամ համայնքային խորհուրդը կամ Երևանի խորհուրդը, որի վերաբերյալ տվյալ խորհուրդն ընդունում է համապատասխան որոշում: Կուսակցության անդամության կասեցման, դադարեցման նշված հիմքերի առկայության դեպքում Կուսակցության Կառավարման խորհուրդը կամ մարզային խորհուրդը կամ համայնքային խորհուրդը կամ Երևանի խորհուրդն ընդունում է որոշում՝ Կուսակցությունից անդամի հեռացման կամ Կուսակցության անդամակցության դադարեցման մասին:

Կուսակցության անդամը, իր պարտականությունների չկատարման, թերացումների, կուսակցական կարգապահական դրույթների զանց առնման, Կուսակցության վերադաս մարմինների որոշումները չկատարելու համար կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Կուսակցության անդամներին կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկել Կուսակցության Կառավարման խորհուրդը կամ մարզային խորհուրդը կամ համայնքային խորհուրդը կամ Երևանի խորհուրդը: Կարգապահական պատասխանատվությունը կարող է լինել՝

- Նկատողություն,
- Խիստ նկատողություն,
- Կուսակցությունից հեռացում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կուսակցությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով

- Կուսակցությունը բացառիկ իրավունք ունի օրենքով սահմանված կարգով առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորի, ինչպես նաև Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների ավագանու անդամի թեկնածուներ,
- մասնակցելու համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը,
- ստեղծել տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներ, ներկայացուցչություններ, ինչպես նաև լուծարել դրանք,
- տարածել տեղեկատվություն իր գործունեության մասին, քարոզել իր նպատակները և խնդիրները,
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրական գործընթացում հավասար և ոչ խտրական պայմաններով օգտվելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվության միջոցներից,
- հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ,
- կազմակերպել հավաքներ և հանրային միջոցառումներ,
- այլ կուսակցությունների հետ ստեղծել դաշինքներ (միավորումներ),
- ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց հետ կապված պարտականություններ,

- հաստատել և պահպանել միջազգային կապեր ու շփումներ օտարերկրյա կուսակցությունների և միավորումների հետ, անդամակցել միջազգային միություններին ու ասոցիացիաներին,
- իրականացնել օրենսդրությամբ չարգելված, իր նպատակներին համապատասխանող այլ գործունեություն,
- իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4.2. Կուսակցությունը պարտավոր է

- պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, ինչպես նաև իր կանոնադրությունը, ծրագիրը և որոշումները,
- յուրաքանչյուր տարի http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով դրա կազմավորման աղբյուրները:
- Ընտրություններին մասնակցելու դեպքում կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրվա ընթացքում, Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում կուսակցության (կուսակցությունների դաշինքները՝ դրանցում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կուսակցության կառուցվածքային մարմիններն են Կուսակցության Համագումարը, Կուսակցության Քաղաքական խորհուրդը, Կուսակցության Կառավարման խորհուրդը, Կուսակցության Նախագահը, փոխնախագահը, արտաքին հարցերով քարտուղարը, Վերահսկիչ հանձնաժողովը, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները: Կուսակցության տարածքային ստորաբաժանումներն են մարզային և համայնքային խորհուրդները, Երևանի

խորհուրդը: Կուսակցության Կառավարման խորհուրդը ստեղծում և լուծարում է Կուսակցության կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանումները (մասնագիտացված հանձնաժողովները): Կառուցվածքային ստորաբաժանումները կոնկրետ խնդրի լուծման նպատակով ստեղծված հանձնաժողովներն են, որոնց ստեղծման, լուծարման, կազմի, կառուցվածքի և գործունեության կարգը սահմանում է սույն Կանոնադրությունով և Կառավարման խորհրդի ընդունած համապատասխան կարգով: Կուսակցության Համագումարի, ղեկավար մարմինների իրավասության ոլորտները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունով, Հայաստանի Հանրապետության «Կուսակցությունների մասին» օրենքով, սույն Կանոնադրությունով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով: Կուսակցության մարզային և համայնքային խորհուրդների և Երևանի խորհրդի ստեղծման և լուծարման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության «Կուսակցությունների մասին» օրենքով, սույն Կանոնադրությունով և «Մարզային, համայնքային և Երևանի խորհուրդների ձևավորման կարգ»-ով, որը հաստատում է Կուսակցության Կառավարման խորհուրդը: Կուսակցության Վերահսկիչ հանձնաժողովի իրավասությունները սահմանվում են սույն կանոնադրությունով և «Վերահսկիչ հանձնաժողովի ընտրության և ձևավորման կարգ»-ով, որը հաստատում է Կուսակցության Համագումարը:

5.1. Կուսակցության Համագումարը

Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը Կուսակցության համագումարն է (այսուհետ՝ Համագումար), որը գումարվում է չորս տարին մեկ անգամ: Համագումարի աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեն Կուսակցության բոլոր անդամները: Հերթական Համագումարը հրավիրվում է Կառավարման խորհրդի որոշմամբ, որը կայացվում է ձայների պարզ մեծամասնությամբ: Համագումարի պատվիրակները առաջադրվում են մարզային խորհուրդների և Երևանի խորհրդի կողմից: Համագումարը իրավազոր է, եթե ներկա է (գրանցված են) պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ: Կուսակցության կանոնադրության հաստատման և ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, բացառությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների

կազմավորման, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, Կուսակցության վերակազմակերպման, լուծարման մասին որոշումներն ընդունվում են ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Համագումարի մնացած որոշումներն ընդունվում են համագումարին ներկա (գրանցված) պատվիրակների ձայների մեծամասնությամբ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

Կուսակցության արտահերթ համագումար կարող է հրավիրվել Կուսակցության Կառավարման խորհրդի անդամների 2/3-ի որոշմամբ կամ Կուսակցության անդամների 1/5-ի առաջարկությամբ:

Կուսակցության Համագումարը՝

- քննարկում է Կուսակցության ծրագրին, Կանոնադրությանն առաջարկվող փոփոխություններն ու լրացումները
- հաստատում է Կուսակցության Կանոնադրությունը, դրանում կատարված փոփոխությունները և լրացումները,
- ընդունում է Կուսակցության ծրագիրը, նրան կից փաստաթղթերը,
- հաստատում է Կուսակցության նախագահի հաշվետվությունը Կուսակցության գործունեության մասին,
- ընտրում է Կուսակցության Կառավարման խորհուրդը,
- ընտրում է Կուսակցության նախագահին,
- հաստատում է Վերահսկիչ հանձնաժողովի կազմավորման ձևը և կարգը, անդամների թիվը և կառուցվածքը,
- ընտրում է Վերահսկիչ հանձնաժողովի անդամներին,
- հաստատում է Կուսակցության Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը,
- որոշում է ընդունում Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման մասին:

5.2. Կուսակցության Քաղաքական խորհուրդը

Կուսակցության Քաղաքական խորհուրդը Կուսակցության ներկայացուցչական գլխավոր մարմինն է: Իրենց լիազորությունների կատարման ողջ ժամկետով Քաղաքական խորհրդի կազմի մեջ են մտնում՝

- Կուսակցության Նախագահը,

- Կուսակցության Կառավարման խորհրդի անդամները,
- Կուսակցության մարզային խորհուրդների և Երևանի խորհրդի նախագահները,
- Կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ:

Քաղաքական խորհուրդը կարող է համալրվել նաև Կուսակցության այլ անդամներով՝ անհատական դիմումի հիման վրա Քաղաքական խորհրդի որոշմամբ, որը կայացվում է ձայների 2/3-ով, բաց քվեարկությունով, երկու տարի ժամկետով: Ժամկետի լրանալուց հետո այն կարող է երկարաձգվել Քաղաքական խորհրդի որոշմամբ: Քաղաքական խորհրդի որոշմամբ համալրված անդամների թիվը չի կարող գերազանցել տասը՝ տվյալ օրացույցային տարվա ընթացքում: Համալրված անդամները կարող են հեռացվել Քաղաքական խորհրդից՝ խորհրդի որոշմամբ, որը կայացվում է ձայների 2/3-ով, բաց քվեարկությամբ:

Կուսակցության Քաղաքական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և Համագումարի որոշումների կատարման միջոցով:

Քաղաքական խորհրդի նիստ է հրավիրվում Կուսակցության Նախագահի կամ Կառավարման խորհրդի անդամների 2/3-ի նախաձեռնությամբ, առնվազն վեց ամիսը մեկ անգամ: Քաղաքական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Կուսակցության Նախագահի կամ Քաղաքական խորհրդի անդամների 2/3-ի նախաձեռնությամբ: Քաղաքական խորհուրդը նախագահում է Կուսակցության Նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կուսակցության փոխնախագահը: Նիստի քվորումն առկա է, եթե նիստին ներկա են անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Քաղաքական խորհրդի անդամների ընդհանուր ձայների թվի պարզ մեծամասնությունով, բաց քվեարկությամբ, եթե սույն Կանոնադրությունով, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով կամ Համագումարի կողմից ընդունված կարգերով այլ բան նախատեսված չէ:

Քաղաքական խորհուրդը հաշվետու է Համագումարին:

Կուսակցության Քաղաքական Խորհուրդը՝

- վերահսկում է Համագումարի և իր որոշումների կատարման ընթացքը և կատարում ամփոփում,

- հաստատում է Կուսակցության ռազմավարությունը, ընդունում է գործողությունների ծրագրեր,
- Կուսակցության անունից անում է հայտարարություններ,
- հաստատում է Ազգային Ժողովում Կուսակցության խմբակցության գործունեության հիմնական ուղղությունները,
- հաստատում է Կուսակցության նախընտրական ծրագիրը, Ազգային Ժողովի պատգամավորության և կառավարությունում քաղաքական պաշտոններում նշանակման կամ ընտրության ներկայացվող Կուսակցության թեկնածուներին,
- հաստատում է համապետական և տարածքային ընտրական ցուցակները,
- որոշում է կայացնում Ազգային Ժողովի ընտրություններին դաշինքով մասնակցելու մասին կամ խորհրդարանական այլ ուժերի հետ դաշինք ստեղծելու մասին,
- որոշում է կայացնում Քաղաքական խորհուրդը Կուսակցության այլ անդամներով համալրելու մասին, որը կայացվում է ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությունով,
- որոշում է կայացնում այլ պետությունների քաղաքական կուսակցությունների հետ համագործակցելու, միջազգային միություններին անդամագրվելու մասին,
- որոշում է ընդունում դիմել Համագումարին Կուսակցության Նախագահի հետկանչի պահանջով, Քաղաքական խորհրդի անդամների կողմից կայացրած որոշման հիման վրա, որին կողմ են քվեարկել Քաղաքական խորհրդի անդամների առնվազն 4/5-ը,
- կարող է հանդես գալ Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման նախաձեռնությամբ,
- լսում և հաստատում է մարզային և համայնքային խորհուրդների, Երևանի խորհրդի, կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները, Կառավարման խորհրդի տարեկան հաղորդումը, հետազոտական կենտրոնի տնօրենի տարեկան հաշվետվությունը:

5.3. Կուսակցության Կառավարման խորհուրդը

Կառավարման խորհուրդը Կուսակցության մշտական գործող գործադիր (ղեկավար) մարմինն է, որի անդամներն ընտրվում են Համագումարի կողմից չորս

տարի ժամկետով, բաց քվեարկությամբ: Ընտրված են համարվում Համագումարի ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն ստացած թեկնածուները: Կառավարման խորհուրդը նախագահում է Կուսակցության Նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կուսակցության փոխնախագահը: Կառավարման խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի, որոշումների ընդունման, դրանց և Համագումարի որոշումների կատարման միջոցով: Կառավարման խորհուրդը հաշվետու է Համագումարին: Կառավարման խորհրդի նիստերը գումարում են առնվազն ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել Կուսակցության Նախագահի կամ գործադիր մարմնի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Նիստի քվորումն առկա է, եթե նիստին ներկա են անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Կառավարման խորհրդի անդամների ընդհանուր ձայների թվի պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե սույն կանոնադրությունով, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով կամ Համագումարի կողմից ընդունված կարգերով այլ բան նախատեսված չէ:

Կուսակցության Կառավարման խորհուրդը՝

- իր կազմից՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, ընտրում է Կուսակցության փոխնախագահ և արտաքին հարցերով քարտուղար,
- իրականացնում է Կուսակցության ամենօրյա կառավարումը, մշակում է Կուսակցության մարտավարությունը, ընդունում է որոշումներ,
- կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Համագումարի որոշումների կատարման գործընթացը,
- հրավիրում է Կուսակցության հերթական համագումարը, նախապատրաստում և կազմակերպում է դրա անցկացումը,
- որոշում է կայացնում Կուսակցության արտահերթ համագումար հրավիրելու մասին Կառավարման խորհրդի անդամների 2/3-ի նախաձեռնությամբ կամ Կուսակցության անդամների 1/5-ի առաջարկությամբ,

- որոշում է կայացնում Համագումարի օրակարգի նախագիծը հաստատելու մասին, հաստատում է Համագումարի գումարման օրը, պատվիրակների ցանկը և ընդհանուր թիվը,
- մշակում և Համագումարի հաստատմանն է ներկայացնում փոփոխությունները Կանոնադրությունում և ծրագրում, դրանց հարակից այլ փաստաթղթերում,
- օրենքի փոփոխությամբ պայմանավորված նախապատրաստում է փոփոխություններ և լրացումներ Կուսակցության Կանոնադրության մեջ և ծրագրում,
- որոշում է ընդունում համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ավագանու թեկնածուներ առաջադրելու մասին,
- մշակում և Քաղաքական խորհրդի հաստատմանն է ներկայացնում համապետական և տարածքային ընտրական ցուցակները, տվյալ նիստին մասնակցում են Կուսակցության բոլոր տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները,
- քննարկում և Քաղաքական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կուսակցության նախընտրական ծրագիրը,
- ստեղծում է և կազմալուծում է Կուսակցության տարածքային ստորաբաժանումները (մարզային կամ համայնքային խորհուրդներ, Երևանի խորհուրդ), վերահսկում է դրանց աշխատանքները,
- ստեղծում է և կազմալուծում է Կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումները (մասնագիտացված հանձնաժողովներ), նշանակում է դրանց ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ, վերահսկում է դրանց աշխատանքները, ընտրում է Կուսակցության հետազոտական կենտրոնի տնօրենին ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, չորս տարի ժամկետով,
- հաստատում է «Լուսավոր Հայաստան» կուսակցության մարզային, համայնքային և Երևանի խորհուրդների (տարածքային ստորաբաժանումների) ձևավորման կարգը», «Լուսավոր Հայաստան» կուսակցության հետազոտական կենտրոնի ձևավորման կարգը»,

«Լուսավոր Հայաստան» կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումների (մասնագիտացված հանձնաժողովների) ձևավորման և գործունեության կարգը», «Լուսավոր Հայաստան» կուսակցության գույքի կառավարման կարգը», «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամավճարների գանձման կարգը», ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները,

- ընդունում է և հաստատում է Կուսակցության անդամակցության դիմումները, Կուսակցությունից դուրս գալու դիմումները, Կուսակցության անդամների նկատմամբ կիրառում է Կանոնադրությամբ սահմանված խրախուսանքները և տույժեր,
- հաստատում է Կուսակցության աշխատողների հաստիքացուցակը և դրույքաչափերը,
- տարեկան առնվազն մեկ անգամ իր գործունեության վերաբերյալ հաղորդում է ներկայացնում Քաղաքական խորհրդին,
- Կուսակցության անունից անում է հայտարարություններ,
- որոշում է կայացնում Կուսակցության գործունեության բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք Կանոնադրությամբ վերապահված չեն Կուսակցության Համագումարի, Նախագահի կամ Քաղաքական խորհրդի իրավասությանը,
- հաստատում է Կուսակցության տարեկան բյուջեն,
- հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է Կուսակցության ծախսերի նախահաշիվը,
- սահմանում է անդամավճարի չափը և վճարման կարգը,
- քննարկում է Կուսակցության տարեկան բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը,
- իրականացնում է Կուսակցության՝ որպես իրավաբանական անձի, այլ լիազորություններ:

5.4. Կուսակցության Նախագահը

- Կուսակցության Նախագահի թեկնածություններն առաջադրվում են Համագումարի պատվիրակների կողմից,

- Կուսակցության Նախագահ ընտրվում է բաց քվեարկության միջոցով Համագումարի ընտրված պատվիրակների ընդհանուր թվի առավել ձայներ ստացած թեկնածուն,
- Կուսակցության Նախագահին ընտրվում է չորս տարի ժամկետով,
- Կուսակցության Նախագահի հետկանչի իրավունք ունի միայն Կուսակցության Համագումարը Կուսակցության Քաղաքական խորհրդի անդամների կողմից կայացրած որոշման հիման վրա, որին կողմ են քվեարկել Կուսակցության Քաղաքական խորհրդի անդամների առնվազն 4/5-ը,
- իրականացնում է Կուսակցության ընդհանուր ղեկավարումը,
- ի պաշտոնե Կուսակցության Քաղաքական և Կառավարման խորհուրդների անդամ է,
- հրավիրում և նախագահում է Կուսակցության Քաղաքական և Կառավարման խորհուրդների նիստերը,
- Կուսակցության Նախագահին նրա բացակայության ժամանակ փոխարինում է Կուսակցության փոխնախագահը,
- ապահովում է Համագումարի և Խորհուրդների որոշումների կատարումը,
- ներկայացնում է Կուսակցությունը, առանց լիազորագրի հանդես է գալիս նրա անունից,
- Կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կուսակցության աշխատողների հաստիքացուցակը և դրույքաչափերը,
- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Կուսակցության հաստիքային աշխատողներին,
- Համագումարին հաշվետվություն է ներկայացնում Կուսակցության գործունեության մասին,
- իր իրավասության սահմաններում որոշումներ է կայացնում Կուսակցության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ և ստորագրում է հրամաններ, կարգադրություններ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր, Կուսակցության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,
- Կառավարման խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Կուսակցության տարեկան բյուջեն,

- Կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում դրամական ծախսերի նախահաշիվները,
- տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները,
- իրականացնում է Կանոնադրությունով և Համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

5.5. Կուսակցության փոխնախագահը

Կուսակցության փոխնախագահն ընտրվում է Կառավարման խորհրդի կազմից Խորհրդի անդամների կողմից իր կազմից՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, չորս տարի ժամկետով: Աջակցում է Կուսակցության Նախագահին՝ վերջինիս լիազորությունների արդյունավետ իրականացման համար: Կուսակցության փոխնախագահը կատարում է նիստի հրավիրման կազմակերպչական աշխատանքները, պատասխանատու է նիստերի արձանագրման համար: Կուսակցության նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան:

5.6. Կուսակցության արտաքին հարցերով քարտուղարը

Կուսակցության արտաքին հարցերով քարտուղարն ընտրվում է Կառավարման խորհրդի կազմից խորհրդի անդամների կողմից՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, չորս տարի ժամկետով: Կուսակցության արտաքին հարցերով քարտուղարը համակարգում է Կուսակցության համագործակցությունը գործընկեր օտարերկրյա կուսակցությունների, միջազգային կազմակերպությունների, ՀՀ-ում ներկայացված դիվանագիտական ներկայացուցչությունների և հիմնադրամների հետ: Արտաքին հարցերով քարտուղարը Կուսակցության Նախագահի հետ քննարկելով ներկայացնում է Կուսակցությունը վերը նշված կառույցներում և աջակցում Կուսակցությանը սատարող հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կառույցների, հիմնադրամների ու կրթական հաստատությունների գործունեությանը:

5.7. Կուսակցության մարզային և համայնքային խորհուրդները

Մարզային և համայնքային խորհուրդները ձևավորվում են Կուսակցության Կառավարման խորհրդի որոշմամբ: Խորհրդի անդամ կարող են դառնալ տվյալ մարզում կամ համայնքում Կուսակցության անդամները՝ իրենց կողմից

ներկայացված ինքնաառաջադրման կամ առաջադրման դիմումների հիման վրա Կառավարման խորհրդի որոշմամբ:

Մարզային և Համայնքային խորհուրդները գործում են մշտական հիմունքներով, կարող են ունենալ իրենց գրասենյակ(ներ)ը և անձնակազմը: Հաշվի առնելու Կուսակցության անդամների և համակիրների թիվը, մեկ մարզերում Կուսակցությունը կարող է ունենալ մեկ Մարզային և մեկից ավելի Համայնքային խորհուրդներ: Կուսակցության Մարզային և Համայնքային խորհուրդներն իրենց գործունեությունն իրականացնում են նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և Կուսակցության Համագումարի, խորհուրդների, Նախագահի որոշումների կատարման միջոցով:

Կուսակցության Մարզային կամ Համայնքային խորհուրդների նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստի քվորումն առկա է, եթե նիստին ներկա են Մարզային կամ Համայնքային խորհրդի անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Մարզային կամ Համայնքային խորհրդի անդամների ընդհանուր ձայների թվի պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Մարզային խորհրդի նիստերը նախագահում է Մարզային խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Մարզային խորհրդի քարտուղարը: Համայնքային խորհրդի նիստերը նախագահում է Համայնքային խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Համայնքային խորհրդի քարտուղարը:

Կուսակցության Մարզային կամ Համայնքային խորհուրդներն իր գործունեության մասին հաշվետու է Կուսակցության Քաղաքական խորհրդին, իսկ տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է Կուսակցության տվյալ մարզային ստորաբաժանման Մարզային խորհրդի նախագահի կողմից: Կուսակցության Մարզային և Համայնքային խորհուրդները կարող են ընդունել Կուսակցության անդամության հայտեր, հաստատել անդամության դիմումները և հեռացնել անդամներին Կուսակցության կանոնադրությունով նախատեսված դեպքերում:

Կուսակցության Մարզային և Համայնքային խորհուրդն ընտրում է իր կազմից Մարզային և Համայնքային խորհրդի նախագահ, քարտուղար և վերահսկիչ:

Մարզային խորհուրդները համապատասխան որոշումներով Կուսակցության Համագումարի համար ներկայացնում են պատվիրակներ:

Կուսակցության Մարզային և Համայնքային խորհրդի նախագահի ընտրության որոշումը կայացվում է քվեարկությանը մասնակցած ձայների պարզ մեծամասնությամբ: Մարզային և Համայնքային խորհրդի նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով, բաց քվեարկությամբ: Քվորումն առկա է, եթե Մարզային և Համայնքային խորհրդի նիստին ներկա են խորհրդի անդամների կեսից ավելին:

Կուսակցության Մարզային խորհրդի նախագահը՝

- իրականացնում է Մարզային խորհրդի կառավարումը,
- հրավիրում և վարում է Մարզային խորհրդի նիստերը,
- հետևում է Կուսակցության գործադիր մարմնի կողմից հանձնարարված աշխատանքների կազմակերպմանը և կատարմանը,
- ներկայացնում է Կուսակցության ղեկավար մարմինների որոշումները մարզային ստորաբաժանման անդամներին, ապահովում է նրանց կողմից առաջարկությունների, բողոքների հավաքման գործընթացը,
- Մարզային խորհրդի գործունեության մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում Կուսակցության Քաղաքական խորհրդին,
- կատարում է Կուսակցության Համագումարի, Նախագահի կամ Կուսակցության խորհուրդների կողմից իր վրա դրված այլ պարտականություններ ևս:

Կուսակցության Համայնքային խորհրդի նախագահը՝

- իրականացնում է Համայնքային խորհրդի կառավարումը,
- հրավիրում և վարում է Համայնքային խորհրդի նիստերը,
- հետևում է Կուսակցության գործադիր մարմնի կողմից հանձնարարված աշխատանքների կազմակերպմանը և կատարմանը,
- ներկայացնում է կուսակցության ղեկավար մարմինների որոշումները համայնքային ստորաբաժանման անդամներին, ապահովում է նրանց կողմից առաջարկությունների, բողոքների հավաքման գործընթացը,
- Համայնքային խորհրդի գործունեության մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում տվյալ մարզի Մարզային խորհրդին,
- կատարում է Կուսակցության Համագումարի, Նախագահի կամ Կուսակցության խորհուրդների կողմից իր վրա դրված այլ պարտականություններ ևս:

Մարզային կամ Համայնքային խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները, իսկ Մարզային կամ Համայնքային խորհրդի նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան, ինչպես նաև կատարում է Կուսակցության խորհուրդների կողմից իրեն հանձնարարված այլ գործառույթներ ևս: Կուսակցության մարզային կամ համայնքային խորհրդի քարտուղարն ընտրվում է Մարզային և Համայնքային խորհրդի կողմից, իր կազմից՝ չորս տարի ժամկետով, խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

Կուսակցության Մարզային և Համայնքային խորհուրդն ընտրում է վերահսկիչ, բաց քվեարկությամբ, չորս տարի ժամկետով, խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

Վերահսկիչը չի կարող լինել Մարզային կամ Համայնքային խորհրդի անդամ կամ Կուսակցության այլ կառուցվածքային ստորաբաժանումների անդամ:

Կուսակցության Մարզային կամ Համայնքային խորհրդի վերահսկիչն իրականացնում է վերահսկողություն Կուսակցության տարածքային ստորաբաժանման դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացների վրա, Կուսակցության անդամների գործունեության համապատասխանությանը Կուսակցության քաղաքական և գաղափարական գծին, վերահսկում է կուսակցության գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման գործընթացները մարզային և համայնքային մակարդակներում և կատարում այլ գործառույթներ, որոնք հանձնարարվում են Կուսակցության Վերահսկիչ հանձնաժողովի կողմից:

Կուսակցության Մարզային և Համայնքային խորհուրդների ձևավորման կարգը, գործունեությունը, անդամների, նախագահի և քարտուղարի ընտրությունը կարգավորվում է առանձին կարգով, որը հաստատվում է Կուսակցության Կառավարման խորհրդի կողմից:

5.8. Երևանի խորհուրդը

Երևանի խորհուրդը ձևավորվում են Կուսակցության Կառավարման խորհրդի որոշմամբ: Խորհրդի անդամ կարող են դառնալ Երևան համայնքի Կուսակցության անդամները՝ իրենց կողմից ներկայացված ինքնաառաջադրման կամ առաջադրման դիմումների հիման վրա, Կառավարման խորհրդի որոշմամբ, չորս տարի ժամկետով:

Երևանի խորհուրդը գործում է մշտական հիմունքներով, կարող է ունենալ իր գրասենյակ(ներ)ը և անձնակազմը Կուսակցության Երևանի խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի հրավիրման, որոշումների ընդունման դրանց և Կուսակցության Համագումարի, խորհուրդների, Նախագահի որոշումների կատարման միջոցով:

Երևանի խորհուրդը համապատասխան որոշմամբ Կուսակցության Համագումարի համար ներկայացնում է պատվիրակներ:

Կուսակցության Երևանի խորհուրդը նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստի քվորումն առկա է, եթե նիստին ներկա են խորհրդի անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր ձայների թվի պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Երևանի խորհրդի նիստերը նախագահում է Երևանի խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Երևանի խորհրդի քարտուղարը:

Կուսակցության Երևանի խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է Կուսակցության Քաղաքական խորհրդին, իսկ տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է Կուսակցության Երևանի խորհրդի նախագահի կողմից: Կուսակցության Երևանի խորհուրդը կարող է ընդունել Կուսակցության անդամության հայտեր, հաստատել անդամության դիմումները և հեռացնել անդամներին Կուսակցության կանոնադրությունով նախատեսված դեպքերում:

Կուսակցության Երևանի խորհուրդն ընտրում է իր կազմից խորհրդի նախագահ, քարտուղար և վերահսկիչ:

Կուսակցության Երևանի խորհրդի նախագահի ընտրության որոշումը կայացվում է քվեարկությանը մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով, բաց քվեարկությամբ: Քվորումն առկա է, եթե Երևանի խորհրդի նիստին ներկա են խորհրդի անդամների կեսից ավելին:

Կուսակցության Երևանի խորհրդի նախագահը՝

- իրականացնում է Երևանի խորհրդի կառավարումը,
- հրավիրում և վարում է Երևանի խորհրդի նիստերը,
- հետևում է Կուսակցության գործադիր մարմնի կողմից հանձնարարված աշխատանքների կազմակերպմանը և կատարմանը,

- ներկայացնում է Կուսակցության ղեկավար մարմինների որոշումներ Երևանի խորհրդի անդամներին, ապահովում է նրանց կողմի առաջարկությունների, բողոքների հավաքման գործընթացը,
- Երևանի խորհրդի գործունեության մասին տարեկան հաշվետվություն ներկայացնում Կուսակցության Քաղաքական խորհրդին,
- կատարում է Կուսակցության Համագումարի, Նախագահի կա Կուսակցության խորհուրդների կողմից իր վրա դրված ա պարտականություններ ևս:

Երևանի խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրություններ իսկ Երևանի խորհրդի նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան ինչպես նաև կատարում է Կուսակցության խորհուրդների կողմից իրեն հանձնարարված այլ գործառույթներ ևս: Կուսակցության Երևանի խորհրդ քարտուղարն ընտրվում է Երևանի խորհրդի կողմից, իր կազմից՝ չորս տարի ժամկետով, խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

Կուսակցության Երևանի խորհուրդն ընտրում է վերահսկիչ, բաց քվեարկությամբ չորս տարի ժամկետով, խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

Վերահսկիչը չի կարող լինել Երևանի խորհրդի անդամ կամ Կուսակցության այլ կառուցվածքային ստորաբաժանումների անդամ:

Կուսակցության Երևանի խորհրդի վերահսկիչն իրականացնում է վերահսկողություն Կուսակցության տարածքային ստորաբաժանման դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացների վրա, Կուսակցության անդամների գործունեության համապատասխանությանը Կուսակցության քաղաքական և գաղափարական գծին, վերահսկում է կուսակցության գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման գործընթացները համայնքային մակարդակում և կատարում այլ գործառույթներ, որոնք հանձնարարվում են Կուսակցության Վերահսկիչ հանձնաժողովի կողմից:

5.9. Կուսակցության հետազոտական կենտրոնը

Հետազոտական կենտրոնը Կուսակցության խորհրդատվական մարմին է, որի հիմնական նպատակն է քաղաքական, տնտեսական, իրավարձային

վերլուծությունների, հետազոտությունների կատարումը և դրանց հիման վրա Կուսակցության Խորհրդին խորհրդատվությունների տրամադրումը: Հետազոտական կենտրոնի աշխատակիցները կարող են լինել անկուսակցական: Հետազոտական կենտրոնի տնօրենին ընտրում է Կուսակցության Կառավարման խորհուրդը ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, չորս տարի ժամկետով:

Հետազոտական կենտրոնի տնօրենը համակարգում է հետազոտական կենտրոնի աշխատանքը, կնքում է համագործակցության համաձայնագրեր, տնօրինում է Կուսակցության կողմից հետազոտական կենտրոնին տրամադրված գույքը և ֆինանսական միջոցները, ներկայացնում է տարեկան հաշվետվություններ Կուսակցության Քաղաքական խորհրդին և Վերահսկիչ հանձնաժողովին առաջարկում է Կուսակցության Նախագահին կնքել աշխատանքային պայմանագրեր և կատարում է Կուսակցության Նախագահի և խորհուրդների կողմից իրեն հանձնարարված այլ գործառույթներ ևս:

Հետազոտական կենտրոնի տնօրենը որոշումներն կայացնում է միանձնյա:

5.10. Կուսակցության մասնագիտացված հանձնաժողովները (կառուցվածքային ստորաբաժանումները)

Կուսակցության մասնագիտացված հանձնաժողովները կազմավորվում են Կուսակցության Կառավարման խորհրդի կողմից: Կուսակցության մասնագիտացված հանձնաժողովների թիվը հաստատուն չէ: Դրանց քանակը, ինչպես նաև անդամների կազմը և թիվը կարող է փոփոխվել Կուսակցության Կառավարման խորհրդի կողմից: Կուսակցության մասնագիտացված հանձնաժողովի ղեկավարը նշանակվում է Կուսակցության Կառավարման խորհրդի կողմից: Կուսակցության մասնագիտացված հանձնաժողովի ղեկավարը համակարգում է հանձնաժողովի աշխատանքները, հետևում է Կուսակցության Կառավարման խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարմանը և համապատասխան աշխատանքների իրականացման մասին հաշվետվություն է ներկայացնում Կուսակցության Կառավարման խորհրդին և հաշվետվություններ՝ Կուսակցության Քաղաքական խորհրդին և Վերահսկիչ հանձնաժողովին:

Կուսակցության մասնագիտացված հանձնաժողովի կառուցվածքը, կազմակերպչական գործունեության առանձնահատկությունները կարգավորվում են առանձին կարգով:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

6.1. Կուսակցության գործունեության վերահսկման նպատակով Համագումարի կողմից չորս տարի ժամկետով ընտրվում է վերահսկիչ հանձնաժողովը:

6.2. Վերահսկիչ հանձնաժողովի անդամը չի կարող լինել Կուսակցության խորհուրդների անդամ, Կուսակցության տարածքային և մասնագիտացված հանձնաժողովների ղեկավար կամ անդամ:

6.3. Վերահսկիչ հանձնաժողովը հաշվետու է Կուսակցության Համագումարին:

6.4. Վերահսկիչ հանձնաժողովը վերահսկում է Կուսակցության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, Կուսակցության անդամների գործունեության համապատասխանությունը Կուսակցության քաղաքական և գաղափարական գծին, հետազոտական կենտրոնի, Կուսակցության մասնագիտացված հանձնաժողովների գործունեությունը, Կուսակցության գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման գործընթացները և կատարում այլ գործառույթներ, որոնք հանձնարարվում են Կուսակցության Համագումարի կողմից:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

7.1. Կուսակցության սեփականությունը, այդ թվում ծրագրային և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ, փոխադրական միջոցներ և այլ գույք, գոյանում են նվիրատվությունից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

7.2. Կուսակցության կողմից ստացված, ինչպես նաև նրա սեփական միջոցների հաշվին ստեղծված և (կամ) ձեռք բերված գույքի սեփականատերը Կուսակցությունն է:

7.3. Դրամական միջոցները ձևավորվում են անդամավճարներից, օրենքով նախատեսված նվիրատվություններից, օրենքով նախատեսված բյուջետային ֆինանսավորումից, քաղաքացիաիրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից:

7.4. Կուսակցության գույքը և դրամական միջոցները տնօրինում է Կուսակցության Նախագահը:

7.5. Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները Կուսակցության կողմից իրենց հատկացված գույքը տիրապետում և օգտագործում են Կուսակցության Կառավարման խորհրդի կողմից նախատեսված սահմաններում ու կարգով:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կուսակցության վերակազմակերպումը և (կամ) լուծարումը կարող է կատարվել Կուսակցության Համագումարի որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով: Կուսակցությունը կարող է վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ) մեկ այլ կուսակցության (կուսակցությունների) :

8.2. Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման նախաձեռնությամբ կարող է հանդես գալ Կուսակցության Քաղաքական խորհուրդը կամ Կուսակցության Համագումարի պատվիրակների առնվազն 2/3-ը՝ գրավոր պահանջով:

8.3. Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման մասին որոշումն ընդունվում է Կուսակցության Համագումարի ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

8.4. Համագումարի կողմից Կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելու դեպքում ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է կուսակցության գույքը և դրամական միջոցները, ինչպես նաև իրականացնում է կուսակցության լուծարման հետ կապված աշխատանքները: Կուսակցության լուծարումից հետո մնացած գույքը, կուսակցության համագումարի որոշմամբ, փոխանցվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպության, հիմնադրամի կամ Հայաստանի Հանրապետությանը:

8.5. Կուսակցության լուծարման նախաձեռնությունը Համագումարի կողմ մերժվելու դեպքում, այդ մասին որոշման ընդունման պահից, դադարեցվում լուծարման նախաձեռնությամբ հանդես եկած կուսակցության անդամնե անդամակցությունը, և անհրաժեշտության դեպքում կատարվում են ն ընտրություններ: